Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի ՀԿ
ՀՀ, Երևան, 0019, Բաղրամյան պող. 24բ,
Հեռ./Ֆաքս՝ (+374 10) 52 36 04
Էլ. փոստ՝ office@awhhe.am
Վեբ կայք՝ http://www.awhhe.am

AWHHE

Armenian Women for Health and Healthy Environment NGO
24b Baghramyan Ave.,
0019, Yerevan, Armenia
Tel./Fax: (+374 10) 52 36 04
E-mail: office@awhhe.am
Website: http://www.awhhe.am

N 113
7 հուլիսի 2025թ.

Եզրակացություն

Վայոց Ձորի մարզում շահագործվելիք հանքերի գործունեությունը կարող է լուրջ վտանգ ներկայացնել շրջակա միջավայրի և մարդու առողջության համար: Հանքարդյունահանման ընթացքում արտանետվում են ռադիոակտիվ նյութեր (ուրան, թորիում, ռադոն), ինչպես նաև ծանր մետաղներ, այդ թվում՝ կապար (Pb), կադմիում (Cd), պղինձ (Cu), ցինկ (Zn), արծաթ (Ag), ինչպես նաև թունավոր միացություններ՝ սնդիկ (Hg), ցիանիդներ և ծծմբի օքսիդներ:

● **Հանքարդյունաբերության հետևանքով հնարավոր են անդառնալի վնասներ ինչպես մարդկանց առողջությանը, այնպես էլ բնության էկոհամակարգերին:**

Հանքաքարերի արդյունահանման և վերամշակման , ինչպես նաև
հանքանյութերի հալեցման, մանրացման, այրման և վերը նշված քիմիական միացությունների բարձր պարունակությամբ փոշու և աերոզոլների ներշնչման ընթացքում առաջացնում են լուրջ առողջական խնդիրներ:Հարկ է նշել նաև որ ռադիոակտիվ նյութերի դեպքում շրջակա միջավայրը աղտոտվում է երկարատև ժամանակահատվածով և հնարավոր չէ ապրել գոյատևել:Մեկ տարվա ընթացքում աշխատողները և բնակիչները կարող են մահանալ լեյկեմիայից:
Այս նյութերը մարդու օրգանիզմ են թափանցում հիմնականում շնչառությամբ, աղտոտված ջրի կամ սննդի միջոցով, երբեմն՝ մաշկի հետ շփման արդյունքում: Դրանք կուտակվում են օրգանիզմում՝ առաջացնելով սուր և քրոնիկ թունավորումներ: Արդյունքում՝ վնասվում են տարբեր օրգաններ և համակարգեր՝ ներառյալ նյարդային, մարսողական, շնչառական, սեռական և միզասեռական համակարգերը, ինչպես նաև արյունատար և ոսկրամկանային համակարգերը:

Սպառնում են հետևյալ լուրջ առողջական խնդիրները՝

- **Քաղցկեղ,**
- **Անպտղություն,**
- **Էնդոկրին և նյարդաբանական խանգարումներ,**
- **Մտավոր զարգացման դանդաղում երեխաների մոտ,**
- **Լյարդի և երիկամների անբավարարություն,**
- **Վարակիչ և քրոնիկ շնչառական հիվանդություններ:**

Հատկապես զգայուն են երեխաները, հղի կանայք, ինչպես նաև հանքավայրերին մոտ բնակվող համայնքների բնակիչները:

Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի ՀԿ-ի
Նախագահ՝ Ելենա Մանվելյան

Փորձագետ՝ Քնարիկ Գրիգորյան

Հաս. կազմ.
Общ. Орг.
N G O
02550261